Պաշտոնական ընդդիմախոսի

ԿԱՐԾԻՔ

Հովհաննես Ռազմիկի Կարապետյանի «ՀՀ բնակչության եկամուտների և ծախսերի տնտեսամաթեմատիկական գնահատումը» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Բնակչության եկամուտների և ծախսերի անհավասարության գնահատումը կարևոր նշանակություն ունի տնտեսական քաղաքականության մշակման տեսանկյունից՝ հնարավորություն տալով գնահատելու տարբեր սոցիալական խմբերի հետ իրականացվող նպատակային միջոցառումները: Բնակչության եկամուտների և ծախսերի բաշխման գնահատման հենքի վրա կառուցված, բնակչության բարեկեցության աճին միտված հարկային և սոցիալական քաղաքականությունները գիտականորեն հիմնավորված են, ուստի նպաստում են պետբյուջեի միջոցների արդյունավետ օգտագործմանը:

Բնակչության եկամուտների և ծախսերի բաշխումների ուսումնասիրության անհրաժեշտությունը և կարևորությունը մեծանում է նաև պայմանավորված այն հանգամանքով, որ ներկա ժամանակաշրջանում խորանում է գլոբալ անհավասարությունը, իր ներգործությունը թողնելով յուրաքանչյուր երկրի բնակչության բարեկեցության մակարդակի և ներքին անհավասարության փոփոխությունների միտումների վրա:

Նշված նկատառումները վկայում են, որ Հայաստանի Հանրապետության բնակչության եկամուտների և ծախսերի անհավասարության հարցերի գիտական հետազոտությունը և այդ անհավասարության տնտեսամաթեմատիկական գնահատումը տնտեսագիտության զարգացման ժամանակակից միտումներին համահունչ ակնհայտորեն կարևոր և արդիական աշխատանք է:

Ատենախոսության կառուցվածքը

Հովհաննես Կարապետյանի ատենախոսական աշխատանքի նյութը շարադրված է տպագիր տեքստի 126 էջի վրա և բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, «Եզրակացություններ» բաժնից, օգտագործված գրականության ցանկից, որը ներառում է 91 անվանում գիտական հոդում և հավելվածներից:

Ատենախոսության առաջին՝ «Բնակչության եկամուտների և ծախսերի դասակարգումը» գլխում ներկայացված է բնակչության եկամուտների և ծախսերի

կառուցվածքը, պարզաբանված՝ բնակչության եկամուտների և ծախսերի վերլուծության սկզբունքները: Ներկայացված են եկամուտներ հասկացության տարբեր սահմանումներ, անվանական, իրական և վերջնական եկամուտներ ցուցանիշները: Վերլուծվել է ՀՀ բնակչության 2020թ. եկամուտների և ծախսերի կառուցվածքը և եկամուտների ու ծախսերի բաղադրիչներից յուրաքանչյուրի փոփոխության միտումը: Հեղինակը պարզաբանել է եկամուտների ֆունկցիոնալ և անհատական բաշխում հասկացությունները, ամփոփել դրանց վերաբերյալ հիմնական տեսությունները՝ դասական դպրոցի ներկայացուցիչների մոտեցումներից մինչև հետքեյնսյան դպրոցի ներկայացուցիչների տեսությունները: Հետազոտվել է բնակչության եկամուտների և ծախսերի անհավասարաչափ բաշխման պատճառները, ինչպես նաև՝ գլոբալ անհավասարությունը:

Ատենախոսության երկրորդ՝ «Բնակչության եկամուտների և ծախսերի բաշխման գնահատման մեթոդաբանությունը» գլխում քննարկված է բնակչության եկամուտների և ծախսերի անհավասարության գնահատման մոտեցումները: Հեղինակի կողմից առաջարկվել է բնակչության եկամուտների և ծախսերի ուսումնասիրության համար օգտագործվող տնտեսամաթեմատիկական մեթոդների նոր դասակարգում՝ անհավասարության գործակիցներ և հարաբերակցություններ, անհավասարության ինդեքսներ, միկրոտնտեսական հետազոտության մեթոդներ, մակրոտնտեսական հետազոտության մեթոդներ: Մանրամասն ուսումնասիրվել և ներկայացվել Ջինի ինդեքսը, նրա անջատումը Գարների մեթոդաբանությամբ և ընդհանրացված էնթրոպիայի դասի այլ ինդեքսներ: Հետազոտության մեջ սինթեզվել են Ֆիլդսի և ՋՄՓ մեթոդները, որը հնարավորություն է տալիս գնահատելու անհավասարության մակարդակի փոփոխությունը:

Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է ՀՀ բնակչության եկամուտների և ծախսերի գնահատմանը: ՀՀ բնակչության եկամուտները և ծախսերը գնահատվել են Ջինի ինդեքսի և միջին լոգարիթմական շեղման էնթրոպիայի միջոցով: Հայաստանում սոցիալական բևեռացվածությունը պայմանավորող գործոններից յուրաքանչյուրի դերը անհավասարության ընդհանուր մակարդակի մեջ բացահայտելու նպատակով հեղինակի կողմից ՀՀ 2020թ. Ջինի եկամտային և ծախսային ինդեքսները տրոհվել են ըստ բաղադրիչների: Հաշվարկված եկամտային և ծախսային բաղադրիչների առաձգականության գործակիցների միջոցով, հաշվի առնելով ՀՀ տնտեսական աճի սպասումների բյուջետային և թիրախային սցենարները, կատարվել է անհավասարության մակարդակի կանխատեսում մինչև 2024թ. ներառյալ:

ՀՀ բնակչության եկամուտների և ծախսերի բաշխման անհավասարության վրա ազդող գործոնների ազդեցությունը ինչպես ժամանակի տարբեր պահերին, այնպես

էլ՝ բնակչության տարբեր խմբերի միջև, գնահատելու համար կիրառվել է ատենախոսի կողմից մշակված նոր մեթոդը, որը սինթեզվել է Ֆիլդսի և ՋՄՓ մեթոդներից: Կառուցվել են բազմագործոն ռեգրեսիայի մոդելներ:

Ատենախոսության *«Եզրակացություններ»* բաժնում ամփոփված են հետազոտության արդյունքում բացահայտված հիմնախնդիրները և դրանց լուծման ուղղությամբ մշակված առաջարկությունները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ներկայացված ատենախոսության վերաբերյալ առկա են որոշակի դիտողություններ՝

1. Աշխատանքի 11-րդ էջում նշվում է, որ իրական եկամուտը հավասար է անվանական եկամտից հանած հարկերի և պարտադիր մուծումների գումարը: Այստեղ խոսքը տնօրինվող եկամտի մասին է, ոչ թե՝ իրական:
2. Նպատակահարմար էր, որ էջ 47-ում ներկայացված (2.2.17) բանաձևում հեղինակի կողմից պարզաբանվեր անցումը կոռելյացիայի գործակցին:
3. Աղյուսակներ (3.2.1)-ում և (3.2.5)-ում (էջեր 71 և 77) ներկայացված են ռեգրեսիոն հավասարման t-վիճակագրությունները, որտեղ 5% նշանակալիության մակարդակի որոշ նշումներ չեն համապատասխանում t-կրիտիկական արժեքին: Ցանկալի էր, որ այս աղյուսակների փոխարեն ներկայացվեր Հավելված 6-ի աղյուսակներ (4.6.3)-ը և (4.6.4)-ը, մեկնաբանելով բացատրող փոփոխականներից յուրաքանչյուրի ազդեցությունը հետազոտվող կախյալ փոփոխականի վրա:
4. Կարծում ենք աշխատանքը կշահեր, եթե ավելի հանգամանորեն քննարկվեր գլոբալ անհավասարությունը և այն բնութագրող ցուցանիշները: Մասնավորապես, կարելի էր ավելացնել «Մեծ Գեբսիի կորը»:
5. Աշխատանքում առկա են խմբագրական բնույթի սխալներ: Նախ, կարելի էր ատենախոսության վերնագրում ավելացնել «բաշխման» բառը: Երկրորդ, ներկայացված 1-ին և 2-րդ գիտական նորույթներում, կարծում ենք, «ՀՀ եկամուտների և ծախսերի բաշխման անհավասարություն» բառակապակցության փոխարեն պետք է գրվեր՝ «ՀՀ <u>բնակչության</u> եկամուտների և ծախսերի բաշխման անհավասարություն»: Երրորդ, խմբագրական բնույթի սխալներ կան մի քանի էջում: Այսպես, էջ 67-ում, կարծում ենք, խմբագրման կարիք ունի տնային տնտեսությունների 51845 թիվը: Էջ 52-ում պետք է գրված լիներ՝ «Բացատրող փոփոխականների արժեքները հայտնի են և նրանց միջև <u>չկա</u> գծային կախվածություն»:

Եզրակացություն

Նշված դիտողությունները բնավ չեն նվազեցնում քննարկվող ատենախոսության գիտական արժեքը: Հ.Ռ. Կարապետյանի ատենախոսությունն արդիական, ավարտուն, գիտական պատշաճ մակարդակով կատարված հետազոտություն է: Այն գրված է կուռ տրամաբանությամբ, ստացված արդյունքների մեկնաբանությունները համոզիչ են և կարևոր գիտական ու գործնական հետաքրքրություն են ներկայացնում: Աշխատանքում քննարկված հարցերի և խնդիրների համակարգված եզրահանգումներն ամփոփված են սեղմագրում և հեղինակի կողմից հրատարակված յոթ գիտական աշխատանքում:

Ելնելով վերը շարադրվածից գտնում եմ, որ Հովհաննես Ռազմիկի Կարապետյանի «ՀՀ բնակչության եկամուտների և ծախսերի տնտեսամաթեմատիկական գնահատումը» թեմայով ատենախոսությունը արդյունքների, կատարված առաջարկությունների և գիտական նորույթի առումով համապատասխանում է Հայաստանի Հանրապետության ԲՈՀ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Գրախոս՝ տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ Ա.Ա. Խառատյան

Ստորագրությունը հաստատում եմ՝ ԵՊՀ գիտական քարտուղար,
բ.գ. թեկնածու, ասիստենտ
Մ.Վ. Հովհաննիսյան